ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Վահագն Խաչատրյան
Տնտեսագետ

Հետազոտությունն իրականացվել է «Համաշխարհային փորձը Վրաստանի համար» հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ Բաց հասարակության հիմնադրամների Եվրասիայի ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվող «Էներգետիկայի ոլորտի կոռուպցիոն ռիսկերը հետսոցիալիստական՝ ներկրումից կախված երկրներում» ուսումնասիրության շրջանակում:

2021

Ներածություն

Ընդհանուր վիճակ

Հայաստանը խորհրդարանական ժողովրդավարական հանրապետություն է՝ մոտ 2,9 մլն բնակչությամբ: Մոտ երկու տասնամյակ երկիրը կառավարվել է ավտորիտար կլեպտոկրատիկ ռեժիմի կողմից, որին հաջողվել է նվաճել և պահպանել քաղաքական ու տնտեսական իշխանությունը՝ ընտրական գործընթացների և արդյունքների կեղծման, ինչպես նաև պետության զավթման միջոցով՝ երկրի տնտեսությունը, քաղաքականությունն ու պետական ինստիտուտներն ի սպաս դնելով օլիգարխիկ կլանների շահերին:

1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին Հայաստանն իրականացրեց պետական ձեռնարկությունների և գույքի, այդ թվում՝ էներգետիկ ակտիվների մասնավորեցում: Մասնավորեցման գործընթացների մեծ մասը ծառայում էր ընկերությունների շահերին՝ դրանով զգալի վնաս հասցնելով երկրի տնտեսությանը, ինչպես նաև ազգային անվտանգությանը և ինքնիշխանությանը

2018 թ.-ի վերջին Հայաստանը դարձել է բարձր միջին եկամուտ ունեցող երկիր[1], սակայն այն դեռևս կանգնած է զարգացման մի քանի մարտահրավերների առջև, ներառյալ՝ տնտեսության մեծ կախվածությունը հումքային ապրանքներից, չնահանջող աղքատությունը և գործազրկությունը, որը 2019 թ.-ին կազմել է 18.5%:

2015 թ. հունվարից Հայաստանն անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը: 2017 թ. նոյեմբերին երկիրը նաև ստորագրել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր Եվրամիության հետ:

2018 թ. գարնան թավշյա հեղափոխությունը տապալեց նախկին՝ շատերի կողմից կոռումպացված համարվող ռեժիմը, և ձևավորեց ակնկալիքներ փոխելու և առավել մարդակենտրոն դարձնելու կառավարման արժեքներն ու փիլիսոփայությունը: Ներկայումս՝ Հայաստանի նոր կառավարությունը ձեռնարկում է մի շարք համարձակ նախաձեռնություններ՝ լուծելու նախորդ վարչակազմի կողմից ստեղծված բազմաթիվ քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրները:

Էներգետիկայի ոլորտ

Ռուսաստանից ներկրվող բնական գազը և միջուկային վառելիքը Հայաստանում արտադրվող էներգիայի հիմնական **աղբյուրներն** են, իսկ էներգիայի ներքին գլխավոր աղբյուրը հիդրոէներգետիկան է: Նավթի և գազի ներկրումները բավարարում են Հայաստանի վառելիքի կարիքների 75%-ը: Ներկայիս էներգետիկ քաղաքականությունը կենտրոնանում է տեղական (հիմնականում՝ վերականգնվող) էներգիայի աղբյուրների զարգացման վրա՝ փորձելով դրանցով փոխարինել ատոմակայանը:

[1] https://datahelpdesk.worldbank.org/knowledgebase/articles/906519-world-bank-country-and-lending-groups, https://blogs.worldbank.org/opendata/new-country-classifications-income-level-2018-2019

Էլեկտրաէներգիայի **արտադրությունը** մեծ մասամբ բավարարում է ներքին պահանջարկը, որը կազմում է տարեկան մոտ 6,500.1 ՄՎտ/ժ: Բոլոր արտադրող կայանների ընդհանուր գործառնական հզորությունը կազմում է շուրջ 2,400 ՄՎտ: Էլեկտրաէներգիայի ներքին պահանջարկի 37%-ը բավարարվում է միջուկային էներգիայի, 31.5%-ը՝ ջերմային էներգիայի, 31.5%-ը՝ հիդրոէներգիայի արտադրության միջոցով:

Էլեկտրահաղորդման ցանցի օպերատորը պետական «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» (ԲԷՑ) ՓԲԸ-ն է, որը տնօրինում է երկրի տարածքում գտնվող բոլոր համապատասխան ակտիվները, սակայն դրանց կառավարման լիազորություն չունի: Հայաստանի էլեկտրահաղորդման համակարգը կապված է Վրաստանի, Թուրքիայի և Իրանի հետ:

Բաշխումն իրականացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀԷՑ) ՓԲԸ-ի կողմից, որը տիրապետում և շահագործում է երկրի բոլոր բաշխիչ ակտիվները: Համակարգը սպասարկում է շուրջ մեկ միլիոն բաժանորդի: Սպառման հաշվառումը և վարձավճարների հավաքումը մոտ են 100%-ի:

Էներգահամակարգի դիսպետչերական կապերն ապահովում է **համակարգի անկախ օպերատորը՝** «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ԷԷՀՕ) ՓԲԸ-ն**,** որը պետական սեփականություն հանդիսացող առանձին ընկերություն է: Տվյալների հավաքագրման և կառավարման համակարգը տեղադրվել է արտադրող կայաններում և 220 կՎ լարման ենթակայաններում:

Ոլորտի **կարգավորող մարմինը** Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն է (ՀԾԿՀ), որը լիցենզիաներ է տրամադրում էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայի մասնակիցներին, այդ թվում՝ ներմուծման և արտահանման գործարքների համար, սահմանում է արտադրության, հաղորդման և բաշխման սակագները, ներառյալ վերջնական օգտագործողների սակագները և սպասարկման վճարները, սահմանում է ներմուծվող էլեկտրաէներգիայի սակագները, սահմանում է շուկայի կանոններն ու բաշխման կանոնները և տրամադրում է զիջումներ խոցելի բաժանորդներին[2]:

Հայաստանի էլեկտրաէներգիայի շուկան մրցակցային չէ: Գոյություն ունի էլեկտրաէներգիայի միայն մեկ բաշխիչ ընկերություն, ինչը բաժանորդներին ընտրության ոչ մի հնարավորություն չի թողնում: Չկան հստակ կանոններ, որոնք կերաշխավորեին հաղորդման և բաշխիչ ցանցերի հասանելիությունը երրորդ կողմերի համար: Չկան շուկայական կանոններ՝ պայմանագրային և մատակարարված էլեկտրաէներգիայի քանակների միջև շեղումները հավասարակշռելու համար: Խոցելի բաժանորդներին պաշտպանելու համար կարգավորիչ խիստ մեխանիզմներ գոյություն չունեն, ուստի ՀՀ կառավարությունն օգտագործում է նպատակային սոցիալական աջակցության սխեմաներ՝ նման բաժանորդներին պաշտպանելու համար: Վերջին երեք տարիների ընթացքում փորձեր են արվել փոփոխելու «Էներգետիկայի մասին» օրենքը՝ մրցակցային շուկայի գործիքների շրջանակը բարելավելու նպատակով, սակայն մինչ այժմ ոչինչ չի փոխվել:

[2] www.arlis.am/DocumentView.aspx?DocID=91484

Ենթադրյալ կոռուպցիան էներգետիկայի ոլորտում

Էներգետիկայի ոլորտը՝ դրամական միջոցների իր վիթխարի շրջանառությամբ (գազամատակարարում՝ տարեկան մոտ 500,000 մլն ԱՄՆ դոլար, էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան մոտ 350 մլն ԱՄՆ դոլար) և զգալի, այսպես կոչված, «կորուստներով» (տարեկան 80 մլն ԱՄՆ դոլար)[3], հանրության համար մշտապես համարվել է «մութ տարածք»՝ իր փակ բնույթի և սահմանափակ տեղեկատվության պատճառով:

1988-2019 թթ. ընկած ժամանակահատվածում ոլորտում կատարվել է շուրջ 2.4 տրիլիոն ՀՀ դրամի (մոտ 4.78 մլրդ ԱՄՆ դոլար) ներդրում՝ իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ընդհանուր հոսքերի մոտավորապես 24%-ը[4]: Դրանք միայն մասամբ են ծառայել իրենց նպատակին, և ենթադրվում է, որ, դրանց մի մասը գողացվել է կոռուպցիոն սխեմաների միջոցով:

Էներգետիկայի ոլորտի հիմնական խնդիրներից մեկը վերաբերում է սակագնի սահմանմանը: Հայաստանն ունի ոչ թանկ հիդրոէներգիայի արտադրության ամենաբարձր մասնաբաժիններից մեկը, թանկ բնական գազի արտադրության ամենացածր մասնաբաժինը և ոչ թանկ միջուկային էներգիայի արտադրության բարձր բաժին: Այդուհանդերձ, համեմատելի երկրների շարքում երկիրն ունի **էլեկտրաէներգիայի ամենաբարձր սակագինը**: Հաշվի առնելով էներգետիկ ակտիվների կասկածելի մասնավորեցման նախապատմությունը, որոշումների կայացման փակ գործընթացները և չբացատրված կորուստները, սակագների սահմանումը դիտվում է որպես քաղաքականության խնդրահարույց ոլորտ:

Համաշխարհային բանկի զեկույցի համաձայն Հայաստանի էներգետիկ ոլորտն ունի աճող ֆինանսական ճեղքվածք, որի պատճառներն են՝ (ա) ոչ հիմնական բիզնես գործունեության համար ծախսերը և վարկերը / փոխառությունները, (բ) ՀԷՑ-ի կողմից չվճարելը, (գ) ծախքերի հատուցումից ցածր սակագները: Ներկայիս իրականությունն արտացոլում է կառավարության աշխատանքի շարունակվող անարդյունավետությունը, թույլ իրավակիրարկումը, կարգավորման վատ որակը և, ենթադրաբար, նաև ոլորտում լայնորեն տարածված կոռուպցիան[5]:

[3] www.armtimes.com/hy/article/138444
[4] «Օտարերկրյա ներդրումները 2019 թվականի հունվար-դեկտեմբերին», Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/file/article/sv_02_20a_420.pdf
[5] Համաշխարհային Բանկ (2016): «Աջակցություն հարկաբյուջետային արդյունավետ կառավարմանը Հայաստանում», "Armenia: World Bank Urges Fairness in Energy Privatization", Emil Danielyan, 02 February, 2000, https://www.rferl.org/a/1093287.html:

Դեպքերի նկարագրություն

Հաշվի առնելով երկրում լայնորեն տարածված կոռուպցիան և էներգետիկ ակտիվների խնդրահարույց մասնավորեցումը՝ տարածված է այն կարծիքը, որ էներգետիկ ծառայությունների բարձր սակագները հաշվարկվում և կիրառվում են այնպես, որպեսզի ավելի շահավետ լինեն էներգետիկ ընկերությունների, քան՝ պետության կամ սպառողների համար, ինչպես նաև հիմնված են քաղաքական նպատակահարմարությունների ու կոռուպցիոն գործարքների վրա: Հանրության շրջանում նման անվստահությունը հիմնավորվում է ստորև նկարագրված մի շարք դեպքերով:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր»

Էլեկտրաէներգիայի բաշխումն ու մատակարարումն ապահովում է ՀԷՑ-ը, որը բաղկացած էր չորս ընկերություններից: ՀԷՑ-ի սեփականաշնորհումը եղել է ամենաերկարատև և աղմկահարույց սկանդալային գործարքներից մեկը, որը տևել է շուրջ 2.5 տարի և իրականացվել Մոսկվայի ուղղակի ճնշման ներքո[6]:

Երբ 2000 թ. ապրիլին Հայաստանը որոշում կայացրեց որակազրկել «Գազպրոմ»-ի հետ փոխկապակցված ռուսական «ԻՏԵՐԱ» (ITERA) ընկերությանը՝ մասնակցելու ՀԷՑ-ի մասնավորեցման մրցույթին, քանի որ «ԻՏԵՐԱ»-ն չէր համապատասխանում հայտարարված միջազգային մրցույթի պահանջներին[7], «Գազպրոմ»-ը պահանջեց անհապաղ վճարել Հայաստանի 16 մլն ԱՄՆ դոլարի գազի ընթացիկ պարտքը և սպառնաց լիովին դադարեցնել գազի մատակարարումը, եթե Հայաստանը մեկ ամսից էլ պակաս ժամանակահատվածում չմարի պարտքը: Մի խումբ ատոմակայաններ շահագործող «Ռոսատոմէներգո» ռուսական ընկերությունը, որը հույս ուներ միանալ «ԻՏԵՐԱ»-ին՝ ՀԷՑ-ը գնելու գործում, մեղադրեց ՀՀ կառավարությանը ռուսական բիզնեսների նկատմամբ խտրական վերաբերմունքի մեջ: Հայաստանում Ռուսաստանի դեսպանը հայտարարեց, որ «ԻՏԵՐԱ»-ի՝ մրցույթի մասնակցությունն արգելելու որոշումը հակասում է տնտեսական համագործակցության խորացման մասին ռուս-հայկական համաձայնագրին: Ի վերջո, Խորհրդարանի ռուսամետ ուժերին հաջողվեց խափանել համապատասխան օրենքների ընդունումը, ինչը փաստորեն դադարեցրեց մասնավորեցման գործընթացը:

Գործընթացը վերսկսվեց 2001 թ.-ին՝ մրցույթի փոփոխված՝ ոչ այնքան խիստ պահանջներով: Նոր մրցույթի արդյունքում պարզվեց, որ արևմտյան ներդրողները կորցրել են

[6] «1998-2000 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման ծրագրի» մասին օրենք (ՀՕ-192, ընդունվել է 1997 թ. դեկտեմբերի 26-ին): Օրենքը վերաբերում էր 7 բաշխիչ ցանցերի (« Երևանի էլեկտրական ցանց» ՓԲԸ, « Հյուսիսային էլեկտրական ընկերություն» ՓԲԸ, «Հարավային էլեկտրական ընկերություն» ՓԲԸ և «Կենտրոնական էլեկտրական ցանց» ՓԲԸ) մասնավորեցմանը, որոնք հետագայում միավորվեցին՝ կազմելով ՀԷՑ-ը: ՀՀ կառավարության 2003 թ. մարտի 20-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման օրվա դրությամբ կրեդիտորական պարտավորությունների մասին» N 272-Ա որոշում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=10724, «Հանձնաժողովը հովանավորե՞լ է ՀԷՑ-ին», «Հետք», 29-ը մայիսի, 2006 թ.՝ https://hetq.am/hy/article/10198, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Մասնավորեցումը և օտարերկրյա ներդրումները Հայաստանի Հանրապետությունում 1997-2020 թվականներին» (Երևան, 2020)՝ https://transparency.am/hy/publications/view/353:

[7] Առաջին փուլը նախարարակավորման ընթացակարգն էր: Մրցույթի գործընթացը պետք է համահունչ լիներ ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ Էներգետիկայի նախարարության, ՀՀ Մասնավորեցման նախարարության, «Raiffeisen Investment» AG և «BSA» Ltd ընկերությունների միջև 1998 թ. դեկտեմբերի 17-ին Համաշխարհային Բանկի կողմից SAC-II պայմանագրի համաձայն տրամադրվող տեխնիկական աջակցության շրջանակում ստորագրված համաձայնագրի պահանջներին: Ըստ «Զեյմսթաուն» հիմնադրամի, «Տելեկոմ»-ի մասնավորեցումը ձախողելուց և Հայաստանի կոնյակի գործարանի սեփականաշնորհման ջանքերից հետո, ՀԷՑ-ի սեփականաշնորհման մրցույթը դիտվում է որպես վատ կառավարվող պետական գույքը սեփականաշնորհելու երկրի ունակության և պատրաստակամության ստուգում:

հետաքրքրությունը ՀԷՑ-ի հանդեպ: Արդյունքում, 2002 թ. օգոստոսին՝ մրցույթների երկրորդ շրջափուլի ընթացքում ՀԷՑ-ը օտարվեց միակ հայտատուին՝ բրիտանական գրանցում ունեցող «Միդլենդ Ռիսորսիզ Հոլդինգ (Midland Resources Holding) ընկերությանը: Սակայն, ինչպես պարզվեց, վերջինս «վստահված» ընկերություն էր, և ընդամենը երեք տարի անց ՀԷՑ-ը «օտարվեց» իր ռուսական սեփականատիրոջը՝ «Միասնական էներգետիկ համակարգեր» բաժնետիրական ընկերությանը («ՌԱՕ ԵԷՍ»):

2005 թ.-ից ի վեր էլեկտրաէներգիայի սակագները մի քանի անգամ փոխվել են՝ մեկ կիլովատ/ժամի համար 2005 թ.-ին՝ 25 ՀՀ դրամից (0,054 ԱՄՆ դոլար) 2020թ.-ին՝ հասնելով 40 ՀՀ դրամի (0.084 ԱՄՆ դոլար)՝ միջինացված: ՀԾԿՀ-ը չի կատարել պատշաճ հաշվարկներ և չի ապահովել ՀԷՑ-ի պահանջած սակագների բարձրացման հիմնավորումը[8]: ՀԷՑ-ի ներկայացրած կորուստները ներառել են չվերադարձված պարտքերը, այդ թվում՝ «Նաիրիտ» և Վանաձորի քիմիական գործարաններին կատարված հարկադիր ֆինանսական փոխանցումները, Երևանի ՋԷԿ-ին, Որոտանի հիդրոկասկադին և «Բարձրավոլտ էլեկտրական ցանցերին» կատարված փոխանցումները[9], բարձրաստիճան պաշտոնյաների կողմից վերահսկվող հիմնադրամներին կատարված վճարումները[10], ինչպես նաև՝ որոշ բարձրաստիճան պաշտոնյաների սպառած էլեկտրաէներգիայի տարիներով չվճարված հաշիվները[11]: ՀԾԿՀ-ն ընդունելի է համարել ՀԷՑ-ի կողմից չհիմնավորված տեխնիկական վնասները (12-18%), ուռճացված գնումները և չառնչվող վարկային միջոցները սակագնի կառուցվածքում: Հայաստանում մինչև 2016 թվականը էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման կորուստները բավականին մեծ են եղել՝ կազմելով էլեկտրաէներգիայի արտադրության 11-14% -ը[12]:

2015 թ. հունիսին ՀԾԿՀ-ը հաստատեց 2015 թ. օգոստոսի 1-ից էլեկտրաէներգիայի սակագները 16%-ով բարձրացնելու վերաբերյալ ՀԷՑ-ի դիմումը: Այս որոշումը հանգեցրեց համընդհանուր դժգոհության և քաղաքացիական շարժման, որը հայտնի դարձավ որպես «Էլեկտրիկ Երևան»[13]: Վերջինը սակագների հարցերի հետ միասին հանրային օրակարգ բերեց ՀԷՑ-ի անարդյունավետության խնդիրը[14]: Բողոքի ցույցերը հաջողեցին չեղարկել էլեկտրաէներգիայի թանկացումը և նպաստեցին ՀԷՑ-ի օտարմանը ՌԱՕ ԵԷՍ-ից «Տաշիր գրուպ»-ին՝ հայկական ծագմամբ անձի՝ Սամվել Կարապետյանին պատկանող ռուսական ընկերությանը: 2017 թ. ապրիլի 14-ից «Տաշիր կապիտալ»-ը և «Լիորմանդ Հոլդինգզ Լիմիթեդ»-ը (Liormand Holdings Limited) տիրապետում են ՀԷՑ-ի համապատասխանաբար 70% և 30% -ին:

[8] https://armtimes.com/hy/article/87986; https://www.lragir.am/2016/03/06/128822; https://168.am/2016/09/07/684544.html; https://www.tert.am/am/news/2016/02/23/energy/1941376; https://www.1in.am/1948525.html

[9] Այս կայանների ընդհանուր պարտքը էներգետիկ ընկերություններին գնահատվում է մոտավորապես 22,4 մլրդ ՀՀԴ: Տես World Bank, 2014. "Armenia Power Sector Policy Note," դեկտեմբեր, Վաշինգթոն, էջ 43:

[10] World Bank, 2014. "Armenia Power Sector Policy Note," դեկտեմբեր, Վաշինգթոն, էջ 43:

[11] hetq.am/hy/article/68827

[12] http://www.psrc.am/public/pages/27, https://data.worldbank.org/indicator/EG.ELC.LOSS.ZS?locations=AM; https://www.azatutyun.am/a/26943003.htm; https://a1plus.am/hy/article/117822; https://www.lragir.am/2015/05/15/114541

[13] https://en.wikipedia.org/wiki/Electric_Yerevan

[14] Սիվիլնեթ, « Էլեկտրիկ Երևան. մեկ տարի անց», հունիսի 23, 2016, https://www.civilnet.am/news/2016/06/23/էլեկտրիկ-երևան-մեկ-տարի-անց/295547

«ՁորաՀԷԿ»

2001-2003 թվականների մասնավորեցման ծրագրի համաձայն 26.4 ՄՎտ հզորությամբ և մոտ 2 մլրդ ՀՀ դրամ (4 մլն ԱՄՆ դոլար) արժեցող «ՁորաՀԷԿ» ՓԲԸ-ն ենթակա էր մասնավորեցման: Այնուամենայնիվ, այս ծրագրի առաջին իսկ փոփոխությամբ գույքը հանվեց ցուցակից: 2001թ. մայիսին ՀՀ կառավարությունը «ՁորաՀԷԿ»-ը հանեց նաև ՀՀ Էներգետիկայի նախարարության հաշվեկշռից և կառավարումը փոխանցեց ՀՀ պաշտպանության նախարարությանը, որն այն ժամանակ գլխավորում էր նախարար Սերժ Սարգսյանը: 2010 թ. դեկտեմբերին կառավարությունը «ՁորաՀԷԿ»-ին թույլ տվեց էլեկտրակայանն օտարել «Ձորագետ հիդրո» ՍՊԸ-ին՝ մի ընկերության, որը գործում էր ընդամենը երկու ամիս[15]: Այդ վաճառքի համար հիմք ստեղծելու նպատակով՝ 2006-2010 թթ.-ին պաշտպանական համակարգին ավելի քան 2.5 մլն ԱՄՆ դոլարի շահույթ ապահոված «ՁորաՀԷԿ»-ում արտադրվող էլեկտրաէներգիայի միավորի սակագինը 2009 թ.-ին 13.9 ՀՀ դրամից իջեցվեց մինչև 2.7 ՀՀ դրամ՝ ոչ շահութաբեր ընկերությունը գնահատված գնից ավելի ցածր գնով վաճառելու նպատակով:

2011 թ.-ին կառավարությունը փոփոխություններ կատարեց օրենսդրության մեջ, որով «փոքր ՀԷԿ-երի» շեմը 10 Մվտ-ից բարձրացվեց 30 Մվտ-ի: Ըստ այդմ՝ «Ձորագետ»-ը դասակարգվեց որպես փոքր ՀԷԿ: Այս փոփոխության հետևանքով «Ձորագետ»-ի արտադրած էլեկտրաէներգիայի գինը մեկ կիլովատ ժամի համար 3.42 ՀՀ դրամից բարձրացավ մինչև 25.4 ՀՀ դրամ (ԱԱՀ-ը ներառյալ)՝ ընկերության համար ստեղծելով մոտ 1.5 մլրդ ՀՀ դրամի (3.1 մլն ԱՄՆ դոլար) շահույթ՝ միաժամանակ ՀԷՑ-ի համար առաջացնելով լրացուցիչ ծախքեր, որը սպառողների համար սակագնի բարձացման պատճառ դարձավ: 2011-2018 թթ.-ին ՀԷԿ-ը գործել է մեծ շահույթներով՝ բերելով, ընդհանուր առմամբ, ավելի քան 29 մլն ԱՄՆ դոլարի եկամուտ[16]:

Ավելի ուշ պարզվել է, որ «Ձորագետ հիդրո»-ն կապված է Միքայել Մինասյանի՝ այդ տարիներին երկրի նախագահ հանդիսացող Սերժ Սարգսյանի փեսայի հետ: Ներկայումս ընթանում է քրեական հետաքննություն «Ձորագետ»-ի վերաբերյալ կայացված որոշումների (սակագնի իջեցում, իրացումներ, դասակարգման շեմի բարձրացում, որի հետևանքով սակագինը բարձրացավ և առաջացրեց հավելյալ շահույթներ) առնչությամբ ՀԾԿՀ-ի ղեկավարի և հանձնաժողովի երկու այլ անդամների կողմից լիազորությունները չարաշահելու վերաբերյալ:

«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր»

«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (ԲԷՑ), որին է պատկանում 110-220 կՎ լարման էլեկտրահաղորդման ցանցը, պատասխանատու է Հայաստանում էլեկտրաէներգիայի հաղորդման, բաշխիչ ընկերությանը (կամ անմիջապես սպառողներին) էլեկտրաէներգիայի վաճառքի և էլեկտրաէներգիայի արտահանման համար: ԲԷՑ-ը իրավասու է նաև կառուցելու հողմակայաններ և հողմից արտադրելու էլեկտրաէներգիա:

[15] azatutyun.am/a/30773179.html
[16] https://www.azatutyun.am/a/30169793.html

2005 թ.-ին ԲԷՑ-ը ֆինանսավորեց Իրան-Հայաստան գազատարի կառուցումը, և դրա հատվածներից մեկի արժեքը՝ 6.1 մլրդ ՀՀ դրամ (13.6 մլն ԱՄՆ դոլար), ներառվեց ՀԾԿՀ-ի կողմից հաստատված սակագնում: Ենթադրաբար՝ «Գազպրոմի» ճնշման ներքո, Իրան-Հայաստան խողովակաշարն ի վերջո ունեցավ ընդամենը 700 մմ տրամագիծ, ինչը նշանակում էր, որ այն այլևս չի կարող ծառայել որպես ռուսական գազատարի այլընտրանք, ինչպես որ նախատեսվել էր: Այդուհանդերձ, 2015 թ.-ին այս գազատարը նույնպես օտարվեց «Գազպրոմ» -ին[17]: 2015 թ.-ին պարզվեց, որ դեռևս 2007 թ.-ին ԲԷՑ-ը խողովակաշարի 40 կմ հատվածը 40 մլն ԱՄՆ դոլարով վաճառել էր «Հայռուսգազարդ» ընկերությանը և նույնիսկ 30 մլն ԱՄՆ դոլար կանխավճար էր ստացել[18]: Խողովակաշարի այս հատվածի վաճառքի միջոցով ԲԷՑ-ը հատուցեց գազատարի կառուցման մեջ իր կատարած սկզբնական ներդրման ծախքերը և, շնորհիվ այդ ծախսածածկման, կարող էր դրանք հանել սակագնային գանձումներից[19], սակայն դա չարվեց:

2017 թ.-ին ՀՀ կառավարությունը ԲԷՑ-ի վերահսկողությունը փոխանցեց «Տաշիր կապիտալ» ՓԲԸ-ին[20], իսկ 2018թ.-ի ապրիլին հաստատեց ԲԷՑ-ի 25-ամյա հավատարմագրային կառավարման ծրագիրը[21]: 2018 թ.-ի հեղափոխությունից հետո, ՀՀ Էներգետիկայի նախարարը հայտարարեց, որ ՀՀ կառավարությունը դադարեցնում է հավատարմագրային կառավարման այս համաձայնագիրը, քանզի համաձայնագրի որոշ դրույթներ ձեռնտու չէին Հայաստանին[22]: Ընդ որում, «Տաշիր կապիտալ» ՓԲԸ-ն պնդում էր, որ ձեռնպահ է մնացել ԲԷՑ-ի կառավարումը ստանձնելուց, քանի որ դա համարում էր ոչ թե շահույթի աղբյուր, այլ ավելի շուտ՝ սակագնի վրա ազդելու միջոց[23]: 2018 թ. հունիսին ՀՀ կառավարությունը չեղյալ հայտարարեց ԲԷՑ-ի հավատարմագրային կառավարման ծրագիրը հաստատելու մասին իր որոշումները:

«ՀայՌուսգազարդ» («Գազպրոմ Արմենիա»)

«Հայուսգազարդ» ՓԲԸ-ն, որը 2013 թվականից հետո վերանվանվեց «Գազպրոմ Արմենիա», հիմնադրվել է 1997թ.-ին՝ որպես ՀՀ կառավարության (45% բաժնեմաս), «Գազպրոմ»-ի (45%) և «ԻՏԵՐԱ» Ինթերնեշնլ Էներջի ՍՊԸ-ի (ITERA International Energy LLC) (10% բաժնեմաս) համատեղ ձեռնարկություն[24]: Մի քանի տարվա ընթացքում ՀՀ կառավարության բաժնեմասը նվազեց մինչև 20%, իսկ 2013թ.-ին՝ խիստ կասկածելի գործընթացի արդյունքում, կառավարությունը մնացած բաժնեմասը վաճառեց «Գազպրոմ»-ին:

Գործարքն ամփոփող երեք խոշոր գազային համաձայնագրերը ստորագրվել են 2013 թ. դեկտեմբերի 2-ին, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Երևան կատարած այցի ընթացքում: Նրա այցն ուղեկցվեց քաղաքացիական անկարգություններով. ոստիկանության կողմից բերման ենթարկվեց շուրջ 1000 մարդ: Համաձայնագրերը

[17] Սարգիս Հարությունյան, «Իրանը Հայաստանի տարածքով գազ կարտահանի Վրաստան», հունվարի 11, 2016 թ., https://www.azatutyun.am/a/27481040.html:
[18] Աստղիկ Բեդևյան, «Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան հատվածը վաճառվում է «Գազպրոմ Արմենիա»-ին, հունիսի 3, 2015 թ., https://www.azatutyun.am/a/27051397.html:
[19] Աստղիկ Բեդևյան, «Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան հատվածը վաճառվում է «Գազպրոմ Արմենիա»-ին, հունիսի 3, 2015 թ., https://www.azatutyun.am/a/27051397.html
[20] ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1035-Ա որոշում:
[21] ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 463-Ա որոշում:
[22] Ռուզաննա Ստեփանյան, «Կառավարությունը դադարեցնում է ԲԷՑ-ի վերաբերյալ «Տաշիր կապիտալ»-ի հետ պայմանագիրը», «Ազատություն» ռադիոկայան, մայիսի 30, 2018 թ., https://www.azatutyun.am/a/29259393.html:
[23] Հովհաննես Մովսիսյան, ««Տաշիր կապիտալը» հակադարձում է կառավարությանը՝ հենց իրենք են հրաժարվել ԲԷՑ-երի կառավարումից»», «Ազատություն» ռադիոկայան, մայիսի 31, 2018 թ., https://www.azatutyun.am/a/29261946.html:
[24] ՀՀ կառավարության 1997 թ. սեպտեմբերի 9-ի N 373 որոշում:

վավերացվեցին Ազգային ժողովի կողմից 2013 թ. դեկտեմբերի 23-ին, իսկ դրան զուգահեռ տեղի էր ունենում ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության խմբերի հանրահավաք:

Հայ-ռուսական գազային պայմանագրերը ստորագրելուց հետո «ՀայՌուսգազարդը» ոչ միայն դարձավ ամբողջովին ռուսական սեփականություն, այլև Հայաստանը պարտավորվեց ապահովել «Գազպրոմի» իրավունքներն ու շահերը Հայաստանում մինչև 2043 թ.-ի ավարտը՝ ի լրումն գազի հաստատուն գների սահմանումը 5 տարի ժամկետով[25]: Համաձայնագիրը նաև Հայաստանին մինչև 2043 թվականի ավարտը զրկեց այնպիսի ոլորտներում իր քաղաքականություններն իրականացնելու ունակությունից, ինչպիսիք են գազի ձեռքբերումը, փոխադրումը և այլ աշխատանքներ[26]:

2005-2018 թթ. ընթացքում «Հայռուսգազարդ»-ի / «Գազպրոմ Արմենիա»-ի եկամուտները քառապատկվել են *(Գծապատկեր 1)*: Տարիներ շարունակ «Գազպրոմը» Հայաստանին գազ է վաճառել համեմատաբար ցածր գներով, մինչդեռ Հայաստանում ներքին գները շատ ավելի բարձր են եղել: Հաշվի առնելով այն փաստը, որ մինչև 2014 թվականը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն վնասներ էր կրում կամ շատ փոքր շահույթ ուներ, կարելի է եզրակացնել, որ ներկրման ցածր գների և սպառողներին մատակարարվող գազի բարձր սակագնի տարբերությունն օգտագործվել է անարդյունավետ կառավարման հետ կապված ծախքերը հատուցելու համար:

Գծապատկեր 1. «ՀայՌուսգազարդ»-ի՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի շահույթները 2005-2018 թթ. ժամանակահատվածում, մլրդ. ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններ:

Ինչպես պարզվում է վերը բերված գծապատկերից, 2014 թ.-ից սկսած «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ընդհանուր շահույթը կտրուկ աճել է: 2005-2013 թթ.-ին ընկերությունն ունեցել է 31.9

[25] «ՀՀ Նախագահի նստավայրում կայացել են հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցություններ», դեկտեմբերի 2, 2013 թ., https://www.president.am/en/press-release/item/2013/12/02/President-Serzh-Sargsyan-meeting-with-the-President-Vladimir-Putin:
[26] Դանիել Իոաննիսյան, «Գազի գնի պայմանագիրը ավարտվում է, մենաշնորհը՝ ոչ», «Իրազեկ քաղաքացիների միավորում», դեկտեմբերի 21, 2018 թ., https://uic.am/5276:

մլրդ ՀՀ դրամի (82.6 մլն ԱՄՆ դոլար) համախառն վնաս՝ 2014-2018 թթ.-ի 111.7 մլրդ ՀՀ դրամի (232.7 մլն ԱՄՆ դոլար) համախառն շահույթի համեմատ[27]:

Դեպքերի ընդհանուր վերլուծություն

Համեմատությունը հետխորհրդային նմանատիպ երկրների հետ ցույց է տալիս, որ Հայաստանում էլեկտրաէներգիայի սակագները համեմատաբար բարձր են[28]: Նման համեմատությունը, օգտագործելով 2016թ. տվյալները, մասնավորապես ցույց է տալիս, որ էլեկտրաէներգիայի սակագները Հայաստանում 48.98 ՀՀ դրամ/կՎտժ-ի փոխարեն պետք է լինեն մոտ 34-35 ՀՀ դրամ կամ նույնիսկ ավելի ցածր, եթե վերլուծության մեջ հաշվի առնվեն Հայաստանի համեմատաբար էժան միջուկային էներգիայի արտադրությունը և Հայաստանում արտադրության և բաշխման փոքր կորուստները: Այս թվերի միջև 14-15 ՀՀ դրամ տարբերությունը (այսինքն՝ մոտ 40%-ով ավել, քան այլ երկրների հետ համեմատության արդյունքում ակնկալվող սակագինն է) կոռուպցիոն այն շահութաբաժինն է, որ Հայաստանի իշխող համակարգը «բարեհաջող» կերպով գանձել է իր ժողովրդից[29]:

Փորձագետների գնահատմամբ 2013-2019 թթ. ընթացքում Հայաստանի քաղաքացիների կողմից անձնական և արդյունաբերական նպատակներով օգտագործվող էլեկտրաէներգիայի դիմաց մուծված վճարներից գողացվել է տարեկան միջինը 100-120 մլն ԱՄՆ դոլար: Հաշվարկները կատարվել են ՀԾԿՀ-ի էլեկտրաէներգիայի ոլորտի տարեկան հաշվետվությունների հիման վրա[30], ընդ որում ՀԷՑ-ի կողմից մատակարարվող էլեկտրաէներգիան տարանջատվել է արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր քանակից (միջինում՝ տարեկան 7.6 մլրդ կՎտ/ժ-ից 5.6 միլիարդ կՎտ/ժ):

Ենթադրյալ կոռուպցիոն սխեմաները գործել են հետևյալ կերպ.

- Տարիներ շարունակ համակարգում իրականացվել են գերարժևորված (չափազանց բարձր գներով) գնումներ, և այդ ծախսերը միշտ փոխհատուցվել են սակագների միջոցով.
- Տարբեր մեծածավալ նախագծեր կամ այլ ակտիվների հետ կապված ծախքեր ներկայացվել են որպես ծախսեր. դրանք իրականում չեն կատարվել, այդուհանդերձ միջոցները «դուրս են գրվել».
- Մի դեպքում ակտիվը «դուրս է գրվել» որպես ոչ պիտանի գույք, սակայն այնուհետ հեշտությամբ նորոգվել և վաճառվել է բարձր գնով. այդ գինը կրկին ներառվել է սակագների մեջ.
- Մեկ այլ դեպքում անավարտ շինարարական աշխատանքները դասակարգվել են որպես կատարված ներդրում և ներառվել սակագնի մեջ.
- Էներգետիկայի ոլորտում գործել են մի շարք ՍՊԸ-ներ, որոնք կապակցված են եղել բարձրաստիճան պաշտոնյաների հետ. այդ ընկերություններն ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման միլիոնավոր դոլարների պատվերներ են ստացել՝ ապրանքները մատակարարելով շուկայականից շատ ավելի բարձր գներով.

[27] Որոշ տարիներ համախառն գնանցքի (մարժա) և շահույթի տարբերությունը պայմանավորված էր ընդհանուր ընդհանուր, վարչական և ֆինանսական այլ ծախսերով:
[28] http://www.psrc.am/images/News/PSRC_Consulting_Services_Part_1_Report__ARM.pdf
[29] https://hetq.am/hy/article/68827
[30] Հաշվարկը հիմնված է http://www.psrc.am/public/pages/27 և https://hetq.am/en/article/68827 կայքերում առկա տվյալների վրա:

- Էներգետիկ ընկերությունների կողմից պետական պաշտոնյաներին վճարվել են կաշառքներ՝ արտոնյալ վերաբերմունք ստանալու և օրենքներ ընդունելու համար, ինչը նրանց հնարավորություն է տվել, բնակչությունից գանձելով չհիմնավորված բարձր սակագներ, նրանց հաշվին ստանալու խոշոր շահույթ:

Այսօրվա սակագների պայմաններում, տարեկան մոտ 7.8 մլրդ կՎտ/ժ արտադրության դեպքում, կոռուպցիոն այս գործունեության արդյունքում բնակչության կրած կորուստները կազմում են տարեկան առնվազն 250 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ Հայաստանի համախառն ներքին արդյունքի մոտ 2.5%-ը[31]:



Նպաստող միջավայր

Էներգետիկայի ոլորտում կոռուպցիոն ռիսկերին նպաստող հիմնական գործոն է եղել որոշումների կայացման թափանցիկության բացակայությունը:

[31] https://hetq.am/hy/article/68827

Որոշումների կայացման գործընթացների թափանցիկություն

Էներգետիկայի ոլորտին առնչվող որոշումներ կայացնելու գործընթացներն, ընդհանուր առմամբ, եղել են փակ և հանրային վերահսկողության համար անհասանելի: Հանրային պայմանագրերը Հայաստանում առհասարակ թափանցիկ չեն, և դրանք հրապարակելու օրենսդրական պահանջ գոյություն չունի: Օրինակ, 2008 թ.-ի պայմանագրով[32] նախատեսված «Գազպրոմ»-ի վաճառած գազի գների բարձրացման մասին հանրությունը տեղեկացել է միայն հինգ տարի անց՝ 2013թ.-ին, ՌԴ նախագահ Վ.Պուտինի այցի ընթացքում միջկառավարական համաձայնագրերի ստորագրման առնչությամբ:

Ընկերությունների իրական շահառուների մասին տեղեկությունները նույնպես բավականաչափ թափանցիկ չեն: Թեև սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՍՊԸ) հիմնադիրների մասին տեղեկությունները հասանելի են www.e-register.am կայքում՝ լրագրողների համար անվճար, իսկ ցանկացած քաղաքացու համար՝ մոտ 6 ԱՄՆ դոլար վճարով, սակայն փակ բաժնետիրական ընկերությունների (ՓԲԸ) բաժնետերերի մասին տեղեկությունները պահվում են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում և ընդհանրապես հասանելի չեն[33]: Վերջին բարեփոխումների համաձայն, ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկում իրական շահառուների թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ, սակայն տվյալ պահին դա որոշ չափով հասանելի է միայն հանքարդյունաբերության ոլորտի համար:

Սակագների հաշվարկի մեթոդաբանությունը

Գոյություն ունեցող կոռուպցիոն սխեմաների պատճառներից մեկը սակագների հաշվարկման մեթոդաբանությունն է, որը սահմանված է «Էներգետիկայի մասին» օրենքով[34]: Այս մեթոդաբանությունը, որը մշակվել է ՀԾԿՀ-ի կողմից, հիմնված է ակնկալվող շահույթի մարժայի հաշվարկման և ընկերությանը անհրաժեշտ եկամուտն ապահովելու սկզբունքի վրա[35]:

Սակագնի կառուցվածքը հետևյալն է.

- Խոշոր արտադրության սակագները տարբերակվում են՝ ըստ հզորության վճարի և էներգիայի գնի: Ներկայիս մեծածախ սակագինը, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), կազմում է մոտ 0.049 ԱՄՆ դոլար/կՎտժ (23.5 ՀՀ դրամ/կՎտժ).
- Վերականգնվող էներգիան կարգավորվում է գնի վերին սահմանի սակագնի մեթոդաբանությամբ՝ տարեկան վերահաշվարկի բանաձևով, ճշգրտված գնաճով և փոխարժեքների կուրսով.

[32] «Գազեքսպերտ» ԲԲԸ-ն ստեղծվել է «Գազպրոմ» հանրային բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 1997 թվականի ապրիլի 9-ի թիվ 39 և 1998 թվականի փետրվարի 12-ի թիվ 53 որոշումների համաձայն: 1999 թվականի մայիսի 12-ին ստացել է 028081 պետական գրանցման համարը: Բ Գլխավոր բաժնետիրոջ որոշմամբ ընկերությունը 2006 թ.-ին վերանվանվեց «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ-ի: «Գազպրոմ»-ը «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ-ի 100 տոկոսանոց սեփականատերն է: https://www.gazpromexport.ru/en/about/history/:

[33] Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա, https://cda.am/am

[34] http://www.parliament.am/law_docs/210301HO148eng.pdf

[35] ՀՀ ՀԾԿՀ-ի 20013 թ. ապրիլի 30-ի N 145-Ա որոշում, ՀՀ ՀԾԿՀ-ի 2002 թվականի նոյեմբերի 1-ի N 79 որոշում «Լիցենզիայի պայմանների մասին», հավելված 2:

- Հաղորդման սակագները մեծածախ շուկայի և արտահանման համար (թեև ամրագրված են նույն հիմքով) կազմում են մոտ 0.02 ԱՄՆ դոլար/կՎտժ (1.0 ՀՀ դրամ/կՎտժ), ներառյալ ԱԱՀ-ն.
- ԷԷՀՕ-ի սակագները սահմանվում են որպես ամսական ծառայությունների վճարներ և որպես էլեկտրաէներգիայի առանձին գին արտահանման համար.
- Բաշխման սակագները դեռևս սահմանված չեն: Պատշաճ իրավական դաշտի բացակայությունն արհեստականորեն սահմանափակում է հարևան երկրներից էլեկտրաէներգիա ներկրելու սպառողների իրավունքները.
- Վերջնական օգտագործողների սակագները տարբերվում են՝ ըստ լարման մակարդակների՝ ցերեկային և գիշերային սակագների համար. չկան հզորության վճարներ, պիկային ժամանակահատվածների սակագներ կամ ծառայության վարձավճարներ, ինչի հետևանքով բաժանորդները պատասխանատվություն չեն կրում խոշոր արտադրության համար սահմանված հզորության վճարների համար.
- Ցերեկային և գիշերային սակագների միջև միջին տարբերությունն աննշան է. բարձր լարման բաժանորդների համար (այսինքն՝ 35-110 կՎ) դա ընդամենը 12% է, իսկ միջին (6-10 կՎ) և ցածր լարման (0.22-0.4 կՎ) բաժանորդների համար՝ ընդամենը 26%[36]:

Սակագների սահմանման ներկայիս մեթոդաբանությունը բիզնեսին թույլ է տալիս գումար վաստակել տարբեր կոռուպցիոն եղանակներով, օրինակ՝ գանձում անավարտ աշխատանքների համար, ծառայության ծախսերի ուռճացում և գանձում անձնական ծախսերի համար: Քանի որ մեթոդաբանությունը ծախսերի խնայողության շահագրգռվածություն չի ստեղծում, ժամանակի ընթացքում սակագների նվազում տեղի չի ունենում, և ՀԾԿՀ-ն, փաստորեն, պարզապես համաձայնվում է որևէ ընկերության կողմից ներկայացված ցանկացած սակագնային առաջարկին:

Երկար տարիներ շարունակ այս մեթոդաբանությունը ՀԾԿՀ-ին թույլ է տվել հաստատել էներգետիկ ընկերությունների կողմից ներկայացված ցանկացած հայտ: Թեպետ ՀԾԿՀ-ն պնդում էր, որ հավասարակշռություն է պահպանել սպառողների շահերի և ընկերությունների միջև, իրականում այն մեծ մասամբ բավարարում էր ընկերությունների պահանջները, իսկ մի քանի դիմումների մերժումը հիմնականում «անկախ» որոշումների կայացման արտաքին տպավորություն ստեղծելու համար էր: Փոխարենը հանձնաժողովը շահագրգռված է եղել գների բարձրացմամբ և մենաշնորհների դիրքի ամրապնդմամբ՝ լինի դա էներգետիկայի, ջրամատակարարման, թե՝ հեռահաղորդակցության ոլորտում: Նման գործելակերպի քննադատությունը տարիների ընթացքում բավարար ուշադրության չի արժանացել: Նույնիսկ 2016 թ.-ի գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությամբ ներկայացված առաջարկությունները մնացել են չիրականացված[37]:

[36] http://www.psrc.am/am/announcements/announcement/2142-1
[37] http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111172&showdoc=2394&cat_id=215&month=all&year=2019&lang=arm


ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Համարվում է, որ էներգետիկ ծայայությունների սակագների հիմքում ընկած են քաղաքական նպատակահարմարությունները և կոռուպցիոն գործարքները:
ՈՒՌՃԱՑԱԾ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ
ՉԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ
«ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ», ՍԱԿԱՅՆ ԹԱՆԿ ՎԱՃԱՌՎԱԾ ԳՈՒՅՔ
ԳԵՐԱՐԺԵՎՈՐՎԱԾ ԾԱԽՍԵՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ, ԲԱՅՑ ՉԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ
ԿԱԾԱՌՔ՝ ԱՐՏՈՆՅԱԼ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
weg
World Experience for Georgia

Գնահատում և հնարավոր լուծումներ

Բարձր սակագներն ունենում են լուրջ տնտեսական և սոցիալական հետևանքներ: Հաշվի առնելով երկրում տիրող խոցելի սոցիալ-տնտեսական իրավիճակը, օրինակ՝ 23-25%-ի հասնող աղքատության մակարդակը[38], ծառայությունների համար չարդարացված չափազանց բարձր վճարները և այսպես կոչված գործարքային ծախքերը (ներառյալ կաշառքը՝ էլեկտրաէներգիայի սպառման դիմաց չվճարելու համար) լուրջ սահմանափակումներ են ստեղծել տնտեսության մրցունակության, բնակչության սոցիալական բարեկեցության և էներգետիկ համակարգի հետագա զարգացման հեռանկարների համար:

Էլեկտրաէներգիայի բարձր սակագները կրճատում են տնային տնտեսությունների եկամուտների այն մասը, որը պետք է ծախսվեր սննդի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների ձեռք բերման համար, և նպաստում են աղքատության աճին[39]: Օգտագործելով Հայաստանի տնային տնտեսությունների ծախսերի տվյալները, Համաշխարհային բանկը (2014 թ.)[40] պարզել է, որ.

- էներգիայի ծախսերն արդեն գնահատվում են որպես տնային տնտեսությունների ընդհանուր ծախսերի 10%-ը, ինչը միջազգային մակարդակով համարվում է «էներգետիկ աղքատության մակարդակ»[41].
- գազի և էլեկտրաէներգիայի գների 2013 թ.-ի կտրուկ բարձրացումների հետևանքով էներգիայի ծախսերի մասնաբաժնի աճը (13.6%-ով) առավելագույնն էր աղքատների համար.
- սակագների բարձրացումը, համաձայն՝ գնահատականի, նպաստել է աղքատության աճին 3%-ով:

Մեկ այլ ուսումնասիրություն էլ (2013 թ.) պարզել է, որ, ըստ կանխատեսումների, էներգիայի սակագների բարձրացման արդյունքում աղքատության մակարդակը Հայաստանում կբարձրանա 6%-ով[42]:

Տարածաշրջանի մյուս երկրների համեմատ Հայաստանի տնային տնտեսությունների եկամուտների էլեկտրաէներգիայի ծախսերի մասնաբաժինը գերազանցում է 5%-ը, ինչն ամենաբարձր է Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների շարքում (որտեղ միջինը 2% է), ինչը պայմանավորված է բնակչության համեմատաբար ցածր եկամուտով *(Գծապատկեր 2)*[43]:

Գծապատկեր 2. Էլեկտրաէներգիայի ծախսերի մասնաբաժինը տնային տնտեսությունների եկամտի կառուցվածքում (%) և էլեկտրաէներգիայի տեսակարար սպառումը (կՎտժ/անձ/ամիս)

---

[38] https://www.armstat.am/file/article/f_sec_4_2019_5.pdf
[39] Հարկ է նշել, որ տնային տնտեսությունների բարեկեցությունը նույնպես կնվազի էլեկտրաէներգիայի սպառման կրճատման հետևանքով (բարձր սակագնի պատճառով):
[40] https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/21874/94187.pdf?sequence=2&isAllowed=y
[41] «Էներգետիկ/էլեկտրաէներգիայի աղքատություն» եզրը վերաբերում է այն տնային տնտեսություններին, որոնք իրենց բյուջեի 10%-ից ավելին ծախսում են էներգիայի/էլեկտրաէներգիայի վրա:
[42] Ruggeri Laderchi, Caterina, Anne Olivier, and Chris Trimble, 2013. "Balancing Act: Cutting Energy Subsidies While Protecting Affordability," The World Bank, Europe and Central Asia Reports, Washington, DC. http://documents.worldbank.org/curated/en/204171468029978923/pdf/Balancing-act-cutting-energy-subsidies-while-protecting-affordability.pdf, p. 20
[43] http://www.psrc.am/images/News/PSRC_Consulting_Services_Part_1_Report__ARM.pdf, p. 15



Թեպետ վերջերս ավելի թարմ ուսումնասիրություններ չեն կատարվել, պատկերն, ամենայն հավանականությամբ, էապես չի փոխվել՝ հաշվի առնելով, որ (ա) նշված ժամանակահատվածում Հայաստանում աղքատության մակարդակը էապես չի փոխվել, (բ) կոմունալ ծախսերի մասնաբաժինը տնային տնտեսությունների բյուջեներում մնացել է նույնը:

Զուտ շահույթի մարժայի վրա հիմնված սակագնային մեթոդաբանությունը բավարար խթաններ չի տալիս կոմունալ ծառայություն մատուցող ընկերություններին՝ իրենց ծախսերը նվազագույնի հասցնելու կամ ծախքերն օպտիմալացնելու համար: Ընդհակառակը, երաշխավորված վերադարձի սկզբունքը կարող է խթան հանդիսանալ գերածախսերի և անտեղի ներդրումների համար, հատկապես, եթե գնումներում նաև կա կոռուպցիայի հավանականություն: Ներդրումները պատշաճ կերպով չեն վերահսկվում կարգավորող հանձնաժողովի կողմից, որը սովորաբար հակված է խրախուսել սակագնի բարձրացումները և կարող է մասնակցել շահույթի ստացման պրոցեսին:

Անշուշտ, կարող են լինել առարկություններ և մի շարք երկրների օրինակներ, որտեղ օգտագործվում է «կարգավորող ակտիվների բազայի վրա հիմնված կարգավորում» կոչվող մեթոդը (“RAB-based regulation”)[44]: Այս մեթոդը կիրառելի է այն երկրներում, որոնք ունեն կոռուպցիայից զերծ, թափանցիկ և խստորեն վերահսկվող մեխանիզմներ:

Հաշվի առնելով այն հսկայական քաղաքական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում Հայաստանում 2018 թ.-ի հեղափոխությունից հետո, որոնց գլխավոր նպատակներից մեկը կոռուպցիան արմատախիլ անելն է, այստեղ առավել արդյունավետ կարող է կիրառվել «գների վերին սահմանի» մեթոդը[45], որն օգտագործվում է Լեհաստանում, Շվեդիայում, Թուրքիայում և մի շարք այլ երկրներում: Անհրաժեշտ է հրաժարվել կարգավորվող ընկերության բիզնեսի

[44] http://www.rosseti.ru/eng/clients/rab/what/
[45] https://www.moneyexpert.com/gas-electricity/what-is-the-energy-price-cap/

շահութաբերության սկզբունքից (ոչ թե ըստ ակտիվների շահութաբերության մոտեցումից)՝ ընկերություններին չարդարացված ներդրումներից զերծ պահելու համար: Դա կնպաստի այդ ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների գների իջեցմանը: Իրականում, ներկայումս ՀԷՑ-ի և ՀԾԿՀ-ի միջև գոյություն ունի նմանատիպ սկզբունքի հիման վրա գործող համաձայնագիր[46]:

Էներգետիկ համակարգը պետք է արմատապես փոխվի, և դա անելու համար իշխանություններին հարկավոր է քաղաքական կամք:

- Առաջին քայլը պետք է լինի էներգետիկ ոլորտը կարգավորող իրավական դաշտի փոփոխությունը: Նպատակը պետք է լինի Հայաստանի էներգետիկայի ոլորտն ավելի անվտանգ դարձնելը՝ անկախության, աղբյուրների բազմազանության, մրցունակության և արդյունավետ ծախսերի առումով:
- Երկրորդ, պետք է քննություն իրականացնել հնարավոր կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ: Հարկ է նշել, որ որոշ, օրինակ, «Ձորագետ» ՀԷԿ-ի և փոքր ՀԷԿ-երի դեպքերում, արդեն հարուցվել են քրեական գործեր, և այդ գործերը նախատեսում են պետությանը պատճառված խոշոր վնասի հատուցում[47]:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարությունը հանրությանը ներկայացրել է էներգետիկ ոլորտի զարգացման նոր ռազմավարական ծրագիր, որի նպատակն է՝ ապահովել անվճար, մրցունակ, խտրականությունը բացառող, ներառական, բազմազանեցված, ավելի անկախ, կանխատեսելի ու թափանցիկ, մատչելի, բոլորի համար արդար, անապահով խավերի համար բավականաչափ մատչելի, ինչպես նաև ներդրողների համար գրավիչ էներգետիկ ծառայություններ: Ռազմավարությունը նախատեսում է, որ մինչև 2028 թ.-ը բոլոր սպառողները միացված կլինեն էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգին, ինչը նրանց հնարավորություն կտա հեռակա կերպով ընթերցել իրենց էլեկտրաէներգիայի հաշվիչ սարքերի ցուցմունքները՝ այս ցուցմունքներն իրական ժամանակում հասանելի դարձնելով ինչպես սպառողներին, այնպես էլ նոր մանրածախ վաճառք իրականացնողներին և շուկայի օպերատորներին՝ ստեղծելով բարենպաստ միջավայր մանրածախ շուկայի ազատականացման համար էլեկտրաէներգիայի առևտրի թվայնացման ճանապարհին: Համակարգում նախատեսվում է նաև ամենամսյա կտրվածքով իրականացնել ծախսերի մանրամասն վերլուծություն՝ արդյունավետ մոնիտորինգի և ներքին հսկողության արդյունավետ մեխանիզմների կիրառմամբ[48]:

[46] https://www.24news.am/index.php/news/9952
[47] https://www.azatutyun.am/a/29926242.html
[48] «ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թ. նախագիծ)», https://www.e-draft.am/projects/2170/about:

Առաջարկություններ

Հայաստանի էներգահամակարգում կոռուպցիան վերացնելու, արդարացի սակագին սահմանելու, վարկային և ներդրումային ծրագրերն արդյունավետ կերպով իրականացնելու և էներգահամակարգի գործառույթներն ամբողջությամբ կատարելու համար անհրաժեշտ է, որ ՀՀ Ազգային Ժողովի, կառավարության և ՀԾԿՀ-ի կողմից ձեռնարկվեն հետևյալ միջոցառումները.

- կիրառել սակագների հաշվարկման նոր մեթոդաբանություն, որն ի վերջո կապահովի ավելի մատչելի սակագին և կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը (օրինակ՝ անցում «փաստից հետո» ճշգրտումից (վերլուծություն ընկերության անցյալ փաստացի ծախքերի հիման վրա) դեպի «փաստից առաջ» կարգավորում, սակագնի և (կամ) դրա առանձին բաղադրիչների (ծախսերի մակարդակ, շահութաբերության մակարդակ, ներդրումներ) սահմանում 3-5 տարվա համար).
- էներգիայի ոլորտում արտադրության, հաղորդման և բաշխման հզորությունների առանձնացում՝ կենտրոնացումը կանխելու, մրցակցությունը խթանելու և էներգետիկ ծառայությունների տնտեսապես արդարացված գներն ու սակագները երաշխավորելու նպատակով.
- ապահովել գնումների համապատասխանությունը պետական գնումների կանոնակարգերի պահանջներին.
- կիրառել աշխատավարձի սահմանափակումներ հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների ղեկավար կազմի նկատմամբ և դրանք հավասարեցնել ՀՀ պետական բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերին.
- էլեկտրաէներգիայի իրացման ոլորտում ներդնել շուկայական մեխանիզմներ և ազատականացնել էլեկտրաէներգիայի մատակարարման շուկան՝ սպառողներին հնարավորություն ընձեռելով ընտրել իրենց էլեկտրաէներգիայի մատակարարին և համապատասխան սակագնային համակարգը.
- հիմնավորել էներգետիկ ընկերությունների եկամուտներն ու ծախսերը, այդ թվում՝ ներառելով Հայաստանի տարածքում ունեցած ակտիվները, և ապահովել դրանց թափանցիկությունը.
- ուժեղացնել ՀԾԿՀ-ի կարողությունները կամ ստեղծել այլընտրանքային պետական մարմին, որը կանոնավոր կերպով տվյալներ կտրամադրի բնական մենաշնորհների սակագների հաշվարկման համար.
- մեծացնել ընկերությունների իրական շահառուների, այդ թվում՝ ՓԲԸ-ների բաժնետերերի մասին տեղեկությունների թափանցիկությունն ու հասանելիությունը հանրության համար.
- ապահովել բոլոր պետական պայմանագրերի և էներգետիկ ոլորտի հետ կապված այլ համապատասխան փաստաթղթերի մատչելիությունը, ինչպես նաև՝ ՀԾԿՀ-ի աշխատանքի թափանցիկությունը.
- պայմանագրերում ներառել ներդրումներին առնչվող բաժիններ, որտեղ կամրագրվեն ներդրումների չափը, նպատակը և ժամանակացույցը.
- բարելավել ընկերությունների կողմից առաջարկվող սակագների փոփոխությունների հիմնավորումների վերլուծության և ստուգման որակը, այդ թվում՝ ընկերությունների ֆինանսական մոդելների մշակման և տարբեր սակագնային սցենարներում դրանց եկամուտների ու ծախսերի թվայնացման պրակտիկայի ներդրման միջոցով.

կորուստները հաշվարկն իրականացնել այլ երկրներում իրենց արդարացրած մեթոդաբանությունների հիման վրա.

- պարբերաբար ապահովել ՀԾԿՀ-ի որոշումների անկախ գնահատման կազմակերպում՝ գնահատման արդյունքների պարտադիր հրապարակմամբ:

Հայաստանում էներգետիկայի ոլորտի բարեփոխումը ներուժ ունի ոչ միայն զսպելու համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը, այլև խթանելու Հայաստանի դիմակայունությունն ու տնտեսական զարգացումը, պաշտպանելու շրջակա միջավայրը, նվազեցնելու կախվածությունը էներգիայի արտաքին աղբյուրներից և ամրապնդելու ազգային անվտանգությունը:

Օգտագործված գրականության ցանկ

Բեդևյան, Ա. (2015, հունիսի 3): *«Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան հատվածը վաճառվում է «Գազպրոմ Արմենիա»-ին”:* «Ազատություն» ռադիոկայան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/27051397.html

Հարությունյան, Ս. (2016, հունվարի 11): *««Իրանը Հայաստանի տարածքով գազ կարտահանի Վրաստան».* «Ազատություն» ռադիոկայան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/27051397.html

IEA Statistics. (2018). *Electric power transmission and distribution losses (% of output) – Armenia.* Retrieved from https://data.worldbank.org/indicator/EG.ELC.LOSS.ZS?locations=AM

Իոաննիսյան, Դ. (2018, դեկտեմբերի 21): *«Գազի գնի պայմանագիրը ավարտվում է, մենաշնորհը՝ ոչ»: «Իրավեկ քաղաքացիների միավորում»: Աղբյուր՝* https://uic.am/5276

Մովսիսյան, Հ. (2018, մայիսի 31): *««Տաշիր կապիտալը» հակադարձում է կառավարությանը՝ հենց իրենք են հրաժարվել ԲԷՑ-երի կառավարումից»»:* «Ազատություն» ռադիոկայան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/29261946.html

Olivier,A, Ruggeri L. C. & Trimble C. P. (2013). Balancing act: cutting energy subsidies while protecting affordability. *World Bank Group.* Retrieved from http://documents.worldbank.org/curated/en/204171468029978923/Balancing-act-cutting-energy-subsidies-while-protecting-affordability

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2019): «Օտարերկրյա ներդրումները 2019 թվականի հունվար-դեկտեմբերին»: Աղբյուր՝ https://www.armstat.am/file/article/sv_02_20a_420.pdf

Ստեփանյան, Ռ. (2018, մայիսի 30): *«Կառավարությունը դադարեցնում է ԲԷՑ-ի վերաբերյալ «Տաշիր կապիտալ»-ի հետ պայմանագիրը»:* «Ազատություն» ռադիոկայան: Աղբյուր՝ https://www.azatutyun.am/a/29259393.html

Հայաստանի Հանրապետության Նախագահ: (2013, դեկտեմբերի 2). *«ՀՀ Նախագահի նստավայրում կայացել են հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցություններ»:* Աղբյուր՝ https://www.president.am/en/press-release/item/2013/12/02/President-Serzh-Sargsyan-meeting-with-the-President-Vladimir-Putin

World Bank. (n.d.). *World Bank Country and Lending Groups*. Retrieved from https://datahelpdesk.worldbank.org/knowledgebase/articles/906519-world-bank-country-and-lending-groups

World Bank. (2014). *Armenia Power Sector Policy Note.* Retrieved from http://hdl.handle.net/10986/21874

World Bank. (2016). *Republic of Armenia Programmatic Fiscal Work: Supporting Effective Fiscal Management.* Retrieved from http://hdl.handle.net/10986/25771

World Bank Data Team. (2018, July 1). *New country classifications by income level: 2018-2019.* Retrieved from https://blogs.worldbank.org/opendata/new-country-classifications-income-level-2018-2019

What is the energy price cap? (n.d.). Moneyexpert. Retrieved on 2021, March 30, from https://www.moneyexpert.com/gas-electricity/what-is-the-energy-price-cap/